## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/3

ք. Երևան «14» փետրվար 2020թ.

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամը», ի դեմս ռեկտոր Ո.Զ.Մարուխյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Մանվել Ջալավյան Ա/Ձ-ն, ի դեմս Մանվել Ջալավյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային սարքերի պահպանման եվ վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2.500.000(Երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ | <<Մանվել Ջալավյան>> Ա/Ձ |
| Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105 | Հասցեն՝ Մոսկովյան 25, 3/1 |
| Բանկը՝ Անելիքբանկ ՓԲԸ | Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ |
| Հ/Հ 118001099431000 | Հ/Հ 2050032155921001 |
| ՀՎՀՀ 01504054 | ՀՎՀՀ 82934656 |
| Ռեկտոր ------------------- Գ.Հ.Մարությանը | Ա/Ձ ------------------------------ Մ.Ջալավյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
« 14 » փետրվար 2020 թ. կնքված
N ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 50311120/3 | համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ<br>Ծառայություն իրականացնող կազմակերպությունը իր միջոցներով իրականացնում է սարքերի տեղափոխումը համալսարանի սպասարկման կենտրոնից (պատվեր ստանալուց հետո մինչև հաջորդող աշխատանքային օրվա ավարտը) և հետ վերադարձը, վերանորոգումն իրականացնել առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում:<br>Սարքերի դիագնոստիկայից հետո անհրաժեշտ մասերի փոխարինումը համաձայնեցնել պատվիրատուի հետ:<br>Պայմանագրում առկա փոխարինման ենթակա կետերը ներառում են նաև մասերը<br>Բոլոր փոխարինվող մասերը պետք է լինեն նոր և նախապես չօգտագործված<br>Վերանորոգման ենթակա սարքերի ցանկը ներկայացված է Հավելված 1.1-ում:<br>Անհրաժեշտ է ներկայացնել ցանկում նշված յուրաքանչյուր մեկ միավոր ծառայության արժեքը: | դրամ | 936.530 | 1 | ք. Երևան Տերյան 105 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 2020թ դեկտեմբերի 25, ծառայության մատուցման առաջին փուլի ժամկետ է սահմանվում պայմանագիրը կնքելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում |
| 2 | 50311120/4 | Լիցքավորվող տոների զանգվածը՝ ոչ պակաս քան 150 գրամ, տպաքանակը՝ տպիչի արտադրող ընկերության կողմից ներկայացված տպաքանակի չափով ±10%, էջի լցվացության՝ 5% դեպքում, որակի վերաբերյալ տոներ արտադրողի սերտիֆիկատի տրամադրմամբ<br>Լուսազգայուն թմբուկի փոխարինումը պետք է ապահովի 8000 էջ տպաքանակը<br>Մաքրող դանակի փոխարինումը պետք է ապահովի 15000 էջ տպաքանակ | դարմ | 330110 | 1 | ք. Երևան Տերյան 105 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թ դեկտեմբերի 25, ծառայության մատուցման առաջին փուլի ժամկետ է սահմանվում պայմանագիրը կնքելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Բոլոր փոխարինված մասերը պետք է լինեն նոր (նախապես չօգտագործված)<br><br>Քարտրիջի չիպի առկայության դեպքում, ընկերությունը պարտավորվում է լիցքավորելիս փոխել այն<br>Ընկերությունը պարտավորվում է քարտրիջի լիցքավորման ընթացքում տրամադրել փոխարինող քարտրիջ, որը կշահագործվի մինչ լիցքավորումը<br>Ընկերությունը պարտավորվում է յուրաքանչյուր շաբաթ՝ երեքշաբթի և հինգշաբթի օրերին, ներկայանալ ՀԱՊՀ ՏՀՏ վարչություն լիցքավորման ենթակա քարտրիջները վերցնելու և 2 օրյա ժամկետում լիցքավորված վերադարձնելու:<br>Անհրաժեշտ է իրականացնել Հավելված 1.2-ում նշված ցանկի քարթրիջների լիցքավորում և վերանորոգում: | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի ազ·ային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ Անելիքբանկ ՓԲԸ
Հ/Հ 11800109943100
ՀՎՀՀ 01504054

Տնօրեն ---------------------------- Ռ.Զ.Մարուխյան
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

<<Մանվել Ջալավյան>> Ա/Ձ
Հասցեն՝ Մոսկովյան 25, 3/1
Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656

Ա/Ձ ---------------------------- Մ.Ջալավյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված1.1

| Չափաբաժին 1* Համակարգիչների, դյուրակիր համակարգիչների և օժանդակ պարագաների վերանորոգում | |
|---|---|
| **Համակարգչի** | |
| LGA 775/ 1150/ 1151/ 1155/ Մայրական տպասալի նորոգում, ներառյալ բոլոր անհրաժեշտ պահեստամասերը | 5000 |
| LGA 775/ 1150/ 1151/ 1155/ Մայրական տպասալի փոխարինում, ներառյալ մայրական տպասալը | 31000 |
| Օպերատիվ հիշողություն RAM DDR 1GB –ի փոխարինում ներառյալ RAM-ը | 4000 |
| Օպերատիվ հիշողություն RAM DDR2 1GB 667/800-ի փոխարինում ներառյալ RAM-ը | 4000 |
| Օպերատիվ հիշողություն RAM DDR2 2GB 667/800-ի փոխարինում ներառյալ RAM-ը | 6000 |
| Օպերատիվ հիշողություն RAM DDR3 2GB 1333-ի փոխարինում ներառյալ RAM-ը | 9000 |
| Օպերատիվ հիշողություն RAM DDR3 4GB 1333-ի փոխարինում ներառյալ RAM-ը | 14500 |
| Օպերատիվ հիշողություն RAM DDR3 8GB 1333-ի փոխարինում ներառյալ RAM-ը | 22000 |
| Օպերատիվ հիշողություն RAM DDR4 4GB –ի փոխարինում ներառյալ RAM-ը | 14000 |
| Օպերատիվ հիշողություն RAM DDR4 8GB –ի փոխարինում ներառյալ RAM-ը | 23000 |
| PCI Express 2GB 128bit գրաֆիկական քարտի փոխարինում ներառյալ քարտը | 26000 |
| Կոշտ սկավառակ HDD 500GB 3.5 Inch, 7200 RPM SATA III-ի փոխարինում ներառյալ կոշտ սկավառակը | 25000 |
| Կոշտ սկավառակ HDD 1TB 3.5 Inch, 7200 RPM SATA III-ի փոխարինում ներառյալ կոշտ սկավառակը | 28000 |
| Կոշտ սկավառակ HDD 2TB 3.5 Inch, 7200 RPM SATA III-ի փոխարինում ներառյալ կոշտ սկավառակը | 36000 |
| SSD SATA3 120GB-ի փոխարինում ներառյալ SDD-ն | 16000 |
| SSD SATA3 240GB-ի փոխարինում ներառյալ SDD-ն | 29000 |
| SSD SATA3 480GB-ի փոխարինում ներառյալ SDD-ն | 39000 |
| Intel Core i3-6100 3.70 GHz պրոցեսորի փոխարինում ներառյալ պրոցեսորը | 42000 |
| Intel Core i3-8100 3.60 GHz պրոցեսորի փոխարինում ներառյալ պրոցեսորը | 62400 |
| Intel Core i5 6500 3.20 GHz պրոցեսորի փոխարինում ներառյալ պրոցեսորը | 65000 |
| Intel Core i5 8400 2.80 GHz պրոցեսորի փոխարինում ներառյալ պրոցեսորը | 90000 |
| Intel Core i7 6700K 4.00 GHz պրոցեսորի փոխարինում ներառյալ պրոցեսորը | 79000 |
| Սնուցման բլոկ 450Watt-ի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը | 7500 |
| Սնուցման բլոկի 650Watt-ի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը | 12000 |
| DVD-RW փոխարինում ներառյալ DVD-RW-ն SATA | 8000 |
| Համակարգչային պահարանի փոխարինում ներառյալ պահարանը | 16000 |
| Համակարգչային պահարանի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը | 2000 |
| **Մոնիտորի** | |
| Սնուցման բլոկի վերանորոգում | 3000 |
| Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը | 10000 |
| LCD կամ LED մատրիցայի փոխարինում ներառյալ մատրիցան 17"/18.5"/19"/ 20"/21.5"/22"/27" | 30000 |
| **Պրոյեկտոր BENQ/Samsung/Optoma/Mitsubishi/DLP** | |
| Վերանորոգում | 9000 |
| Լամպի փոխարինում նորով ներառյալ լամպը | 58000 |
| Մատրիցայի փոխարինում ներառյալ մատրցան | 45000 |
| Սնուցման բլոկի նորոգում կամ փոխարինում ներառյալ պահեստամասերը | 22000 |
| **Պլանշետ** | |
| Պլանշետի վերանորոգում ներառյալ պահեստամասերը | 12000 |
| Պլանշետի էկրանի (Nexus 7) փոխարինում ներառյալ էկրանը | 20000 |
| Պլանշետի էկրանի (iPad) փոխարինում ներառյալ էկրանը | 25000 |
| Պլանշետի վերածրագրավորում | 8000 |
| **Տեսահսկող սարքեր** | |
| Տեսախցիկների վերանորոգում Sony IP139SHR4 կամ համարժեք | 9000 |

| | |
|---|---|
| Տեսաձայնագրող սարքերի վերանորոգում H.264 Digital Video Recorder (DVR) կամ համարժեք | 15000 |
| Տեսաձայնագրող սարքերի վերանորոգում H.265 Digital Video Recorder (NVR) կամ համարժեք | 15000 |
| Տեսաձայնագրող սարքերի (H.264 Digital Video Recorder (DVR)) կից սարքերի վերանորոգում կամ փոխարինում ներառյալ պահեստամասերը | 5000 |
| Տեսաձայնագրող սարքերի (H.265 Digital Video Recorder (NVR)) կից սարքերի վերանորոգում կամ փոխարինում ներառյալ պահեստամասերը | 5000 |
| Տեսաձայնագրող սարքերի (H.264 Digital Video Recorder (DVR)) LAN module-ի վերանորոգում | 10000 |
| Տեսաձայնագրող սարքերի (H.265 Digital Video Recorder (NVR)) LAN module-ի վերանորոգում | 10000 |
| Տեսաձայնագրող սարքերի (H.264 Digital Video Recorder (DVR)) մայրսալիկի (motherboard) վերանորոգում | 14000 |
| Տեսաձայնագրող սարքերի (H.265 Digital Video Recorder (NVR)) մայրսալիկի (motherboard) վերանորոգում | 14000 |
| Տեսաձայնագրող սարքերի (H.264 Digital Video Recorder (DVR)) մայրսալիկի (motherboard) փոխարինում ներառյալ մայրսալիկը | 25000 |
| Տեսաձայնագրող սարքերի (H.265 Digital Video Recorder (NVR)) մայրսալիկի (motherboard) փոխարինում ներառյալ մայրսալիկը | 26000 |
| Տեսաձայնագրող սարքերի (H.264 Digital Video Recorder (DVR)) VGA module-ի վերանորոգում | 12000 |
| Տեսաձայնագրող սարքերի (H.265 Digital Video Recorder (NVR)) VGA module-ի վերանորոգում | 12000 |
| Տեսաձայնագրող սարքերի (H.264 Digital Video Recorder (DVR)) -ի վերածրագրավորում | 6000 |
| Տեսաձայնագրող սարքերի (H.265 Digital Video Recorder (NVR)) -ի վերածրագրավորում | 6000 |
| Տեսաձայնագրող սարքերի սնուցման բլոկ 12V-ի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը | 14000 |
| **Անխափան սնուցման սարքի** | |
| Մարտկոցի 12V/7A փոխարինում ներառյալ մարտկոցը | 9000 |
| Մարտկոցի 12V/9A փոխարինում ներառյալ մարտկոցը | 12000 |
| Մարտկոցի 12V/17A փոխարինում ներառյալ մարտկոցը | 22000 |
| Ղեկավարող սալիկի վերանորոգում | 8000 |
| Վերաչափաբերում | 5000 |
| **Դյուրակիր համակարգչի** | |
| Մայրական տպասալի նորոգում | 15000 |
| Սնուցման բլոկի վերանորոգում | 4000 |
| Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ բլոկը | 8000 |
| Օպերատիվ հիշողություն RAM DDR2 1GB -ի փոխարինում ներառյալ RAM-ը | 4000 |
| Օպերատիվ հիշողություն RAM DDR2 2GB -ի փոխարինում ներառյալ RAM-ը | 7500 |
| Օպերատիվ հիշողություն RAM DDR3 2GB -ի փոխարինում ներառյալ RAM-ը | 8000 |
| Օպերատիվ հիշողություն RAM DDR3 4GB -ի փոխարինում ներառյալ RAM-ը | 15000 |
| Կոշտ սկավառակ HDD 320GB 2.5 Inch, 7200 RPM SATA II-ի փոխարինում ներառյալ կոշտ սկավառակը | 15000 |
| Կոշտ սկավառակ HDD 500GB 2.5 Inch, 7200 RPM SATA III-ի փոխարինում ներառյալ կոշտ սկավառակը | 24000 |
| Կոշտ սկավառակ HDD 1TB 2.5 Inch, 7200 RPM SATA III-ի փոխարինում ներառյալ կոշտ սկավառակը | 26000 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **1.337.900** |

Հավելված 1.2

## 2 Քարթրիջների լիցավորում և վերանորոգում

| | |
|---|---|
| HP CF217A/CF219A քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները | 4000 |
| HP CF217A/CF219A քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ փմբուկը | 4000 |
| HP CF217A/CF219A քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը | 2800 |
| HP CF217A/CF219A քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը | 2400 |
| HP CF217A/CF219A քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը | 2000 |
| HP CF217A/CF219A քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը | 2000 |
| HP CF217A/CF219A քարթրիջի չիպի փոխարինում, ներառյալ չիպը | 2000 |
| HP 35A/36A/85A/12A/05A/80A/80X/92A/06A/15A/13A/24A/49A/53A քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները | 3000 |
| HP 35A/36A/85A/12A/05A/80A/80X/92A/06A/15A/13A/24A/49A/53A քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը | 2500 |
| HP 35A/36A/85A/12A/05A/80A/80X/92A/06A/15A/13A/24A/49A/53A քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը | 2000 |
| HP 35A/36A/85A/12A/05A/80A/80X/92A/06A/15A/13A/24A/49A/53A քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը | 1500 |
| HP 35A/36A/85A/12A/05A/80A/80X/92A/06A/15A/13A/24A/49A/53A քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը | 1500 |
| HP 35A/36A/85A/12A/05A/80A/80X/92A/06A/15A/13A/24A/49A/53A քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը | 2000 |
| HP 74A/03A/98A/51A/96A/11A/29X/49X քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները | 5000 |
| HP 74A/03A/98A/51A/96A/11A/29X/49X քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը | 4000 |
| HP 74A/03A/98A/51A/96A/11A/29X/49X քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը | 3000 |
| HP 74A/03A/98A/51A/96A/11A/29X/49X քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը | 2000 |
| HP 74A/03A/98A/51A/96A/11A/29X/49X քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը | 2000 |
| HP 74A/03A/98A/51A/96A/11A/29X/49X քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը | 3000 |
| Canon 303/703/708/712/719/725/728/FX9/FX10/T/EPA/EP22/EP25/EP26/EP27/FC-PC քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները | 3000 |
| Canon 303/703/708/712/719/725/728/FX9/FX10/T/EPA/EP22/EP25/EP26/EP27/FC-PC քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը | 2500 |
| Canon 303/703/708/712/719/725/728/FX9/FX10/T/EPA/EP22/EP25/EP26/EP27/FC-PC քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը | 2000 |
| Canon 303/703/708/712/719/725/728/FX9/FX10/T/EPA/EP22/EP25/EP26/EP27/FC-PC քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը | 1500 |
| Canon 303/703/708/712/719/725/728/FX9/FX10/T/EPA/EP22/EP25/EP26/EP27/FC-PC քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը | 1500 |
| Canon 303/703/708/712/719/725/728/FX9/FX10/T/EPA/EP22/EP25/EP26/EP27/FC-PC քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը | 2000 |
| Samsung ML 1610/4521/1210/D109S/D104S/D101S/D111S քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները | 4000 |
| Samsung ML 1610/4521/1210/D109S/D104S/D101S/D111S քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը | 4000 |
| Samsung ML 1610/4521/1210/D109S/D104S/D101S/D111S քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը | 2500 |
| Samsung ML 1610/4521/1210/D109S/D104S/D101S/D111S քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը | 2000 |
| Samsung ML 1610/4521/1210/D109S/D104S/D101S/D111S քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը | 2000 |
| Samsung ML 1610/4521/1210/D109S/D104S/D101S/D111S քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը | 2500 |
| Xerox P8e/PE16/3200/106R02183/108R00909 քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները | 4000 |
| Xerox P8e/PE16/3200/106R02183/108R00909 քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը | 4000 |
| Xerox P8e/PE16/3200/106R02183/108R00909 քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը | 2500 |

| | |
|---|---|
| Xerox P8e/PE16/3200/106R02183/108R00909 քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը | 2000 |
| Xerox P8e/PE16/3200/106R02183/108R00909 քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը | 2000 |
| Xerox P8e/PE16/3200/106R02183/108R00909 քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը | 2500 |
| Canon C-EXV33/C-EXV5/ NPG-1/ NP7161 քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները | 6000 |
| Epson EPL6200 քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները | 8000 |
| Epson EPL6200-ի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը | 6000 |
| Epson EPL6200-ի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը | 3000 |
| Epson EPL6200-ի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը | 3000 |
| Epson EPL6200-ի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը | 3000 |
| Epson EPL6200-ի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը | 3000 |
| Lexmark E250/E260-ի քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները | 6000 |
| Lexmark E250/E260-ի քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը | 5000 |
| Lexmark E250/E260-ի քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը | 3000 |
| Lexmark E250/E260-ի քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը | 3000 |
| Lexmark E250/E260-ի քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը | 3000 |
| Lexmark E250/E260-ի քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը | 3000 |
| Lexmark E250/E260-ի քարթրիջի չիպի փոխարինում, ներառյալ չիպը | 6000 |
| Panasonic KX-FA83 քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները | 4000 |
| Panasonic KX-FA83 քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը | 4000 |
| Panasonic KX-FA83 քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը | 2500 |
| Panasonic KX-FA83 քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը | 2000 |
| Panasonic KX-FA83 քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը | 2000 |
| Panasonic KX-FA83 քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը | 2500 |
| Panasonic KX-FA83 քարթրիջի չիպի փոխարինում ներառյալ չիպը | 3000 |
| Epson C900/1100/1900 քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները | 7000 |
| Epson C900/1100/1900-ի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը | 7000 |
| Epson C900/1100/1900-ի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը | 5000 |
| Epson C900/1100/1900-ի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը | 5000 |
| Epson C900/1100/1900-ի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը | 5000 |
| Epson C900/1100/1900-ի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը | 5000 |
| HP Q6000A/Q6001A/Q6002A/Q6003A քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները | 8000 |
| HP Q6000A/Q6001A/Q6002A/Q6003A քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը | 6500 |
| HP Q6000A/Q6001A/Q6002A/Q6003A քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը | 4000 |
| HP Q6000A/Q6001A/Q6002A/Q6003A քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը | 4000 |
| HP Q6000A/Q6001A/Q6002A/Q6003A քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը | 4000 |
| HP Q6000A/Q6001A/Q6002A/Q6003A քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը | 4000 |
| HP Q6000A/Q6001A/Q6002A/Q6003A քարթրիջի չիպի փոխարինում, ներառյալ չիպը | 4500 |
| HP 201A B/C/M/Y քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները | 9000 |
| HP 201A B/C/M/Y քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը | 5000 |
| HP 201A B/C/M/Y քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը | 4000 |
| HP 201A B/C/M/Y քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը | 3000 |
| HP 201A B/C/M/Y քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը | 3000 |
| HP 201A B/C/M/Y քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը | 3500 |
| HP 201A B/C/M/Y քարթրիջի չիպի փոխարինում, ներառյալ չիպը | 2000 |
| HP 201X B/C/M/Y քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները | 11000 |

| | |
|---|---|
| HP 201X B/C/M/Y քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը | 5000 |
| HP 201X B/C/M/Y քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը | 4000 |
| HP 201X B/C/M/Y քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը | 3000 |
| HP 201X B/C/M/Y քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը | 3000 |
| HP 201X B/C/M/Y քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը | 3500 |
| HP 201X B/C/M/Y քարթրիջի չիպի փոխարինում, ներառյալ չիպը | 2000 |
| HP CE740A/CE741A/CE742A/CE743A քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները | 12000 |
| HP CE740A/CE741A/CE742A/CE743A քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը | 6000 |
| HP CE740A/CE741A/CE742A/CE743A քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը | 5000 |
| HP CE740A/CE741A/CE742A/CE743A քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը | 3500 |
| HP CE740A/CE741A/CE742A/CE743A քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը | 3500 |
| HP CE740A/CE741A/CE742A/CE743A քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը | 5000 |
| HP CE740A/CE741A/CE742A/CE743A քարթրիջի չիպի փոխարինում, ներառյալ չիպը | 4000 |
| Canon 723 B/C/M/Y քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները | 9000 |
| Canon 723 B/C/M/Y քարթրիջի քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը | 5000 |
| Canon 723 B/C/M/Y քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը | 4000 |
| Canon 723 B/C/M/Y քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը | 3000 |
| Canon 723 B/C/M/Y քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը | 3000 |
| Canon 723 B/C/M/Y քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը | 3500 |
| Canon 723 B/C/M/Y քարթրիջի չիպի փոխարինում, ներառյալ չիպը | 2000 |
| HP DJ 15 քարթրիջի լիցքավորում | 1000 |
| **Տպիչների** | |
| Վերանորոգում | 5000 |
| Պրոֆիլակտիկա | 7000 |
| Սկաների փոխարինում ներառյալ սկաները | 9000 |
| Xerox-ի վերածրագրավորում | 6000 |
| Samsung-ի վերածրագրավորում | 6000 |
| HP-ի վերածրագրավորում | 4000 |
| Canon-ի վերածրագրավորում | 4000 |
| Lexmark-ի վերածրագրավորում | 4000 |
| EPSON STYLUS PHOTO 1410-ի վերանորոգում ներառյալ պահեստամասերը | 25000 |
| EPSON STYLUS PHOTO 1410-ի մայրական սալիկի փոխարինում ներառյալ մայրական սալիկը | 38000 |
| EPSON STYLUS PHOTO 1410-ի տպող գլխիկի փոխարինում ներառյալ տպող գլխիկը | 45000 |
| Վառարանի թերմոժապավենի փոխարինում HP LJ 1020, 1105, Canon LBP 2900, MF 4410, Samsung 1660, Lexmark E260, Phaser 3140, Xerox Phaser 3100MFP կամ համարժեքը (ներառյալ թերմոժապավենը) | 9000 |
| Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում HP LJ 1020, 1105, Canon LBP 2900, MF 4410, Samsung 1660, Lexmark E260, Phaser 3140, Xerox Phaser 3100 MFP կամ համարժեքը (ներառյալ ռետինե լիսեռը) | 11000 |
| Վառարանի ջերմատաքացուցիչի փոխարինում HP LJ 1020, 1105, Canon LBP 2900, MF 4410, Samsung 1660, Lexmark E260, Phaser 3140, Xerox Phaser 3100 MFP կամ համարժեքը (ներառյալ ռետինե լիսեռը) | 9500 |
| Ատամնանիվի փոխարինում HP LJ 1020, 1105, Canon LBP 2900, MF 4410, Samsung 1660, Lexmark E260, Phaser 3140, Xerox Phaser 3100 MFP կամ համարժեքը (ներառյալ ատամնանիվը) | 6000 |
| Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում (ներառյալ ռետինե լիսեռը) | 2500 |
| Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը | 15000 |
| Սնուցման բլոկի վերանորոգում ներառյալ պահեստամասերը | 8500 |
| **Պատճենահանող սարք** | |
| Պատճենահանող սարքի պրոֆիլակտիկա | 12000 |
| Պատճենահանող սարքի վերանորոգում | 7000 |
| Թերմոթաղանթի փոխարինում Canon 1215/6317/7161/1600/iR2318, կամ համարժեքը (ներառյալ թերմոթաղանթը) | 12000 |

| | |
|---|---|
| Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում Canon 6012/6512/1018/1022, կամ համարժեքը (ներառյալ ռետինե լիսեռը) | 13000 |
| Վառարանի ֆետրե կամ տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ վառարանի ֆետրե կամ տեֆլոնե լիսեռ Canon 1215/6317/7161/FC-PC, կամ համարժեքը | 15000 |
| Canon 1215/6317/7161/1600/iR2318, պատճենահանող սարքի սկաների փոխարինում ներառյալ սկաները | 9000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | **651.200** |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Հայաստանի ազ·ային պոլիտեխնիկական
համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ Անելիքբանկ ՓԲԸ
Հ/Հ 11800109943100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտոր ---------------------------- Ռ.Զ.Մարուխյան
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

<<Մանվել Ջալավյան>> Ա/Ձ
Հասցեն՝ Մոսկովյան 25, 3/1
Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050032155921001
ՀՎՀՀ 82934656

Ա/Ձ ---------------------------------- Մ.Ջալավյան
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված N 2*
*«14» փետրվար 2020 թ. կնքված*
*N ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | |
| | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50311120/3 | համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ | 136,364 | 272,727 | 409,091 | 545,455 | 681,819 | 818,183 | 954,547 | 1,090,911 | 1,227,275 | 1,363,639 | 1,500,000 | 1,500,000 |
| 2 | 50311120/4 | համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ (քարթրիջների լիցքավորում) | 90,909 | 181,818 | 272,727 | 363,636 | 454,545 | 545,454 | 636,363 | 727,272 | 818,181 | 909,090 | 1,000,000 | 1,000,000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Հայաստանի ազ·ային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ | <<Մանվել Ջալավյան>> Ա/Ձ |
| Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105 | Հասցեն՝ Մոսկովյան 25, 3/1 |
| Բանկը՝ Անելիքբանկ ՓԲԸ | Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ |
| Հ/Հ 11800109943100 | Հ/Հ 2050032155921001 |
| ՀՎՀՀ 01504054 | ՀՎՀՀ 82934656 |
| Ռեկտոր ------------- Ռ.Հ.Մարտիրոսյան | Ա/Ձ ------------- Մ.Ջալավյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված 3
«      » փետրվար 2020 թ. կնքված
N ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
________________________
________________________
գտնվելու վայրը ____________
հհ ______________________
հվհհ ____________________

Պատվիրատու
________________________
________________________
գտնվելու վայրը ____________
հհ______________________
հվհհ____________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«    » «            » 20   թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «   » «            » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
________________________
ստորագրություն
________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
________________________
ստորագրություն
________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*« » փետրվար 2020 թ. կնքված*
*N ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և __________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N __________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ______________________<br>ազգանուն, անուն | ______________________<br>ազգանուն, անուն |
| ______________________<br>ստորագրություն | ______________________<br>ստորագրություն |